Հանրապետական
մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների հետ կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Հայկանուշ Գրիգորյան

2023

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2.Գրական ակնարկ.....5

3.Ծրագրի ընդհանուր նկարագիրը դպրոցի և ծնողի փոխգործակցության մոդելը.....5

4.Ծնողների ներգրավվածությունը.....14

5. Եզրակացություն.....19

6.Գրականության ցանկ.....20

Ներածություն

«Ծնող լինելը/ծնողավարությունը սոսկ նպատակային ուղղություն չէ, այն ճամփորդություն է: Յուրաքանչյուր ճամփորդության համար մենք պետք է պատրաստված լինենք»:

Լինելով շատ պարտավորեցնող՝ ծնողավարությունը միևնույն ժամանակ ամենաօգտակար և քաղցր փորձություններից մեկն է: Շատերը կարող են վիճել, որ

21րդ դարում երեխաներ մեծացնելը ավելի բարդ է, քան երբևէ եղել է: Չնայած իրենց լավ մտադրություններին՝ շատ ծնողներ հակված են ծնողի դերում սխալ կերպով առաջնորդվելու: Մեր օրերում ավելի ու ավելի է բարդանում ծնողավարության հնացած մեթոդների կիրառումը երեխաների նկատմամբ: Այս հանգամանքը ծնողներին մտահոգում է, և նրանք մտածում են, որ երեխաները իրենց չեն դրսևորում «այնպես, ինչպես հարկն է»: Այսպիսով, ի՞նչ է հարկավոր ծնողավարությունը հաջողված ճամփորդության վերածելու համար: Դաստիարակման դրական մոտեցումը ծնողավարության մոտեցում է: Այն մտածելակերպ է: Այն կառուցված է արդյունավետ ծնողավարության չորս սկզբունքների վրա՝

Դրական դաստիարակման հիմունքները՝

Դրական դաստիարակման հիմնաքարերը միայն երեխայի կյանքի վաղ շրջանում չէ, որ անհրաժեշտ են: Դրանք կարևոր են երեխայի զարգացման ողջ ընթացքում: Նույնիսկ, երբ երեխան 20 տարեկան է, մենք կարող եք, այս մեթոդները օգտագործելով, օգնել նրան որոշումներ կայացնել, խնդիրներ լուծել և կոնֆլիկտի դեպքում կառուցողական մոտեցումներ գտնել:

Պարզ ասած, դաստիարակման դրական մոտեցումը ներառում է երեխայի զարգացման լայն փորձն ու սկզբունքները, երեխային մեծացնելը և երեխայի խնամքը: Դրական

դաստիարակումը ընդհանուր է, համատեղ: Այն չի հրամայում, չի ստիպում: Հիմնական կանոնները երկկողմանիորեն են ընդունվում, համաձայնեցվում: Այն կենտրոնանում է տարբեր տեսանկյունների համար առավել երկարատև լուծումներ գտնելու վրա:

Հետազոտական աշխատանքի նպատակները՝

Մի շարք մեթոդներով և հնարներով զարգացնելու և արդյունավետ դարձնելու ծնողավարությունը կրտսեր դպրոցական երեխաների ծնողների շրջանակներում՝ նպաստելով այդ տարիքի երեխաների ֆիզիկական, մտավոր, հոգեբանական, սոցիալական և գիտական կայուն զարգացմանն ու աճին:

Ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) դարձնել մանկավարժական գործընթացի ակտիվ մասնակիցներ՝ օգնելով նրանց երեխաների դաստիարակության և կրթության համար պատասխանատվության իրականացման գործում:

Հետազոտական աշխատանքի նպատակները և խնդիրները՝

Գիտակցված դաստիարակություն. ծնողների իրազեկվածություն և պատրաստակամություն ստանձնելու պատասխանատվություն երեխային ապահովելու և մեծացնելու համար: Սա հիմք է բարեկեցիկ ընտանիքի, երեխաների հոգեբանական առողջության և որակյալ ծնող-երեխա հարաբերությունների համար:

Արդյոք ճիշտ ծնողավարության արդյունքում կկարողանանք բարձրացնել աշակերտների առաջադիմությունը:



Ճիշտ ծնողավարության հասնելու համար, պետք է ընտրել ճիշտ մեթոդներ և հնարներ ծնողների հետ աշխատելու և ցանկալի արդյունքի հասնելու համա:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը

կայանում է նրանում, որ պետք է համապատասխան ուշադրություն դարձնել ուսումնադաստիարակչական գործնթացին, որը պետք է լինի ուղղորդված ծնող-ուսուցիչ համատեղ գործնթացով և կնպաստի երեխայի ազատ և

ստեղծարար անձի ձևավորմանը: Այս համագործակցությունը ամրագրված է ՀՀ Կրթության մասին օրենքում:

Այսօր, երբ շատ ծնողներ կենտրոնացած են իրենց ընտանիքի սոցիալ-տնտեսական հարցերի կարգավորման վրա, կարծես թե երեխաների դաստիարակությունը և ուսմանը հետևելը մի փոք դուրս է մնում ծնողների ուշադրությունից:Պետք է հաշվի առնել նաև,որ շատ ծնողներ կարող են բավականաչափ գիտելիքներ չունենալ երեխաների տարիքային առանձնահատկությունների և համապատասխան տարիքային զարգացման մասին և այլն:

Ծրագրի ընդհանուր նկարագիրը

Դպրոցի և ծնողի փոխգործակցության մոդելը

Ինչպես գիտենք ծնողավարության համատեքստում կան շատ մշակութային և էթնիկ առանձնահատկություններ, մենք չենք կարող նույնացնել տարբեր ազգերի ծնողներին, և բնականաբար յուրաքանչյուր ազգ,և հասարակություն ունի իր դիրքորոշումները, թե ինչ պահանջներ են դրվում այսպես ասած լավ կամ վատ ծնողի առջև: Պետք է արժևորել ծնողավարության դերն ու նշանակությունը դպրոցում, մշակել դրական ծնողավարման հմտություններ, թե ինչպես նպաստել երեխայի ուղեղի զարգացմանը և բարձրացնել նրա առաջադիմությունը դպրոցում:

Մեր աշխատանքը իրականացնելիս մենք ոչ միայն պետք է չանտեսենք մեր ազգային ինքնությունը,այլ նաև պետք է հաշվի առնենք բնակության վայրը, ընտանեկան մթնոլորտը,ծնողների զարգացվածությունը և այլն:

Ծրագրի իրականացման պլանը

1. Հասկանալ՝ ինչպես են մտածում և զգում երեխաները

Ընտանիքը երեխայի սոցիալականացման առաջին հաստատությունն է: Նա որոշիչ դեր է խաղում անհատականության զարգացման գործում: Այսինքն երեխան ծնողի համար ընկալվում է արժեք,որպես անձնավորություն,երեխա-ծնող-ուսուցիչ հարաբերությունները կառուցվում են իրավահավասար համակարգում:Մենք կարող ենք շատ բան սովորել մեր երեխայի մասին ՝ նրան դիտելուց ՝ ինչպես է նա խաղում, շփվում, վարվում հասարակության մեջ: Բայց գլխավորը՝ նրա հոգեվիճակը: Այն, ինչ անհանգստացնում է նրան, ինչ է զգում, ինչ է մտածում: Իսկ ի՞նչ կա քո հոգում. հարցն ուղղակիորեն տալով ՝ մենք դժվար թե պատասխան ստանանք: Ստեղծագործական մթնոլորտը, որը ներառում է խաղը և մասնակցային այլ մեթոդներ և գործիքներ, իրականում կարող է լավագույն կերպով ի ցույց դնել երեխայի հետաքրքրությունները՝ նպաստելով վերջինիս զարգացմանը՝ որպես պատասխանատու և հաշվետու քաղաքացի:Մենք գիտենք, որ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հիմնական գործողությունը խաղն է,որն էլ մենք կարող ենք օգտագործվել որպես գործիք:

Ահա նմանատիպ խաղի օրինակ.

«Անավարտ հեքիաթներ» - Բոլորը սիրում են լսել հեքիաթներ, բացի այդ, հեքիաթային լեզվով հաղորդակցությունը բուժական ազդեցություն ունի: Ուրեմն ինչու մեզ չընդգրկնել այս հետաքրքրաշարժ աշխարհում, որն օգնում է մեզ հաղթահարել ցանկացած դժվարություն:

Իմաստը հետևյալն է, մենք երեխային տալիս ենք մի փոքրիկ սյուժե, նկարագրում ենք մեր ընտանիքը գլխավոր հերոսների ներքո: Ստեղծագործ եղեք և պատմություն գրեք: Եվ

հետո տալիս ենք հարցը. «Ի՞նչ ես կարծում, հետո ի՞նչ եղավ», և շատ կարևոր է պահել հետևյալ 2 սկզբունքները.

1. Երեխան չպետք է հասկանա, որ ցանկանում եք ինչ -որ բան բացահայտել նրանից: Փնտրեք ճիշտ պահը դա անելու համար: Օրինակ, նա կարող է ինքն իրեն շարունակություն առաջարկել:

2. Մի մեկնաբանեք նրա պատասխանները: Երբ ձեր պատմությունն ավարտվի, մտածեք այն մասին, թե ինչ էր ասում երեխան: Եվ մի շտապեք անընդմեջ պատմել բոլոր հեքիաթները, դուք ձեզ կշփոթեք, և երեխան արագ կհոգնի, փոխեք հեքիաթի ընթացքը այն ուղղությամբ, որով երեխան ընտրում է:

Եվ հիմա ձեզ առաջարկում եմ հետևյալ հեքիաթների օրինակներ.

1. «Ժամացույց»: Հին ժամանակներում մի վարպետ էր ապրում: Նա ժամացույցներ էր պատրաստում և պահում էր այն ժամացույցները, որոնք իրեն ավելի էին գրավում: Նա իր տանը ժամացույցների իսկական ընտանիք ուներ. հայրը ժամացույցի ճոճանակն էր, մայր՝ ժամացույցի միջի կկուն է, իսկ երեխան՝ զարթուցիչը:

Ժամացույցի հայր ճոճանակը տարուբերվում էր ղեկավարելով րոպեների ընթացքը:Կըկվիկ մայրիկը նույնպես զբաղված էր :Նա հետևում էր ժամին, և հայտնում յուրաքանչյուր ժամը:Իսկ երեխան տխուր էր: Ձեր կարծիքով, ինչի՞ց էր երեխան ձանձրանում և տխրում:

o Այս հեքիաթը կօգնի մեզ հասկանալ, թե ինչպես է երեխան իրեն զգում ընտանիքում, ինչպես է նա վերաբերվում ընտանեկան խնդիրներին:

2. «Կռունկներ»: Կռունկների ընտանիքում մեծանում էր իրենց տղան: Փոքրիկ ճուտը գրեթե սովորել էր թռչել: Սկսվեցին ցուրտ եղանակները, և հայրիկը ասաց, որ ժամանակն է պատրաստվել չվել տաք երկրներ : Երեխան վախենում էր, որ չի կարողանա հաղթահարել այդքան երկար տարածություն: Բայց մայրն ասաց. «Դու արդեն մեծ ես, ուժեղ և կարող ես գլուխ հանել»: Եվ նրանք ճանապարհ ընկան: Ճանապարհը երկար էր, բայց ձագուկին հաջողվեց հաղթահարել : Երբ նրանք հասան նոր վայր…Ի՞նչ եղավ հետո…

o Այս պատմությունը կօգնի ձեզ հասկանալ, թե ինչպես է երեխան ընկալում կյանքի փոփոխությունները:

3. «Ագռավ»: Արքայական ընտանիքում մեծանում էր իրենց որդին : Մի օր թագավորական երկնքում ագռավ հայտնվեց: Նա բռնեց իշխանին և տարավ իր թագավորություն: Խեղճ

արքայազնը խնդրեց խղճալ իրեն և թողնել, որ գնա իր ընտանիքի մոտ: Ինչին նա պատասխանեց. «Լավ,բայց միայն մեկ պայմանով , նշիր քո մեջ եղած 3 լավ հատկություններ: Կստուգեմ և դու տուն կգնաս »: Ի՞նչ եք կարծում, ինչ ասաց նա?

o Իրադարձությունների այս շրջադարձը թույլ կտա պարզել, թե ինչ ինքնագնահատական ունի ձեր երեխան: Միգուցե նա վարանում է իրեն ուժեղ, բարի, համակրելի անվանե՞լ: Աջակցեք անվճռական երեխային:

Ահա և մի քանի հետաքրքիր և երեխային բացահայտող մեթոդներ, որոնց օգնությամբ ավելի լավ կարելի է ճանաչել երեխային և այնուհետև նրա բացահայտելուց հետո ճիշտ աշխատանք պլանավորել:

2. Ապահովել ջերմություն

Խնդիր լուծման համար հաջորդ կարևոր քայլը դա ջերմության ապահովումն է: **<u>Ոքի համար պետք է լինել հաստատակամ ու սիրալիր միաժամանակ:</u>** Որպեսզի երեխան հնազանդության հմտություններ զարգացնի, նա պետք է իմանա, որ իրեն սիրում են և պատժում են ոչ թե ատելությունից, այլ նրա հանդեպ սիրուց: Ընդգծեք սերը, ուշադրությունը և ջերմությունը, բայց հաստատ եղեք ձեր համոզմունքների մեջ: Սա ձեր երեխային ցույց կտա, որ դուք նրան շատ եք սիրում և գիտեք, թե ինչպես է նա զգում, բայց նա դեռ պետք է հետևի սահմանված կանոններին:Երբ դուք երբեմն զիջում ենք նրա լացին, նվնվոցին և այլն նա դա ամեն անգամ որպես զենք է կիրառում իր նպատակին հասնելու,ցանկությունը իրագործելու համար:Սահմանված կանոններին պետք է հետևել միշտ, երբ մեկ անգամ նրանք վրիպվում են երեխան մտածում է, որ կարելի է այն անտեսել և անտեսում է երբ իրեն անհրաժեշտ է:Այստեղից կարելի է հետևություն անել,որ ծնողի սահմանած կանոնները պետք է նախ և առաջ պահպանի ծնողը,չմոռանալով լինել սիրալիր և հասկացող ծնող:

Ծնողը պետք է հասկանա երեխային,ոչ թե երեխան ծնողին, որովհետև ծնողը երեխայի տարիքում եղել է,իսկ երեխան՝ ոչ:

<u>Աշխատեք միասին</u>: Սա ոչ միայն ժամանց է, այլև երեխաները կսովորեն կատարել տնային գործեր: Սովորեցրեք երեխաներին մաքրել, եփել, խնամել ընտանի կենդանիներին և այլն: Սա չպետք է լինի սովորական ձևականություն, երեխան պետք է պատասխանատու լինի իր կատարված աշխատանքի համար:Նշեք հաջողությունները, գովեք և գնահատեք նրա ներդրումը ընտանիքում: Ուշադրություն դարձրեք, եթե երեխան նախաձեռնություն վերցնի և ինքնուրույն մաքրի, զբոսնի շան հետ կամ այլ կարևոր աշխատանքներ կատարի ՝ առանց մեծահասակների հիշեցման

կամ ուղղորդման: Այդ ժամանակ ցանկացած աշխատանք իմաստ կունենա: Երեխայի համար դա կդառնա կարևոր և հետաքրքիր:

<u>Եղեք օրինակ</u>:Շատ ծնողների մտահոգում է այն հարցը, թե ինչպես երեխային դարձնել կառավարելի, մինչդեռ նրանք չեն ցանկանում փոխել իրենց սովորություններն ու հաստատված ապրելակերպը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ երեխաները շատ զգայուն են վաղ տարիքում: Եվ այսպես, նրանք փորձում են ենթագիտակցորեն ընդօրինակել ամենամոտ մեծահասակներին, որոնց տեսնում են ամեն օր և ամենից շատ վստահում են ` իրենց ծնողներին: Եվ, հետևաբար, շատ կարևոր է, որ ծնողները վարվեն այնպես, ինչպես պետք է, լավ օրինակ դառնան երեխայի համար: Երեխաների համար հաստատված բոլոր կանոնները պետք է անթերի հետևեն մեծահասակների կողմից:

Օրինակ, եթե հայրը ծխում է, ապա երեխայի համար շատ դժվար կլինի բացատրել, թե ինչո՞ւ է դա վնասակար և ինչո՞ւ դա չպետք է արվի: Զուր չէ ասված՝ <<Երեխան տան հայելին է>>,նա արտացոլում է իր ընտանիքը:

Այս մեթոդը շատ լավ ազդեցություն կարող է ունենալ նաև գաջեթների դեմ պայքարում: Եթե ցանկանում ենք, որ երեխան քիչ ժամանակ տրամադրի գաջեթներին, պետք է սկսենք մեզանից:Նախ և առաջ մենք ինքներս չպետք է ինքնամոռաց խորասուզվենք գաջեթների մեջ և նրանց չափից շատ կարևորություն տանք:Քանզի գաջեթները, արդեն իսկ,զրկել են երեխաներին առողջ մանկությունից: Պետք է նաև շեշտեմ, որ հենց գաջեթների չափից շատ օգտագործման արդյունք է այն,որ երեխաները գտնվում են սարսափելի զգացմունքային վիճակում:

Կարելի է կիրառել նաև մի շարք այլ մեթոդներ.

Որքա՞ն ժամանակ եք անկացնում ձեր տղայի կամ աղջկա հետ. 80 տոկոսը պատասխանում են, որ միասին կատարում են տնային առաջադրանքները. բայց դա բավարար չէ:Այժմ եկեք երեխայի և ձեր հարաբերությունները համեմատենք տղամարդու և կնոջ միջև հարաբերությունների հետ: «Պատկերացրեք իրավիճակը. տղամարդը սիրում է ձեզ, հագցնում ձեզ, ապահովում ձեզ բնակարանով և սնունդով, հոգ է տանում, բայց ժամանակ չի անցկացնում ձեզ հետ, նա շաբաթական ընդամենը երկու ժամ է հայտնվում ձեզ հետ զբոսնելու և վերջ: Գո՞հ եք նման հարաբերություններից: Ո՛չ: Իսկ երեխաների հետ դա նորմալ է՝ կերակրված, հագնված, գնված խաղալիքներ: Իսկ որտե՞ղ է սերը»: Եթե երեխան գնում է գաջեթ,

ապա, ամենայն հավանականությամբ, ծնողների հետ հարաբերությունները խզվում են ընտանիքում: Նա իրեն զգում է միայնակ, անհետաքրքիր, աննշան և նրա լավագույն ընկերը դառնում է էլեկտրոնային սարքը: Միևնույն ժամանակ, համակարգչային խաղերում, սոցիալական ցանցերում հաղորդակցության մեջ երեխան, ընդհակառակը, իրեն զգում է շփվող, ուժեղ հերոս և արդյունքում դառնում է ինքնքնփոփ:



Ժամանակակից ընտանիք

<u>Գտեք փոխարինող-</u>Որպես կանոն, ծնողների համար ամենահայտնի մեթոդը գաջեթը հեռացնելն է: Եթե որոշեք հետևել դրան, խորհուրդ է տրվում մտածել , թե ինչ տալ դրա դիմաց: «Չես կարող երեխայից հաճելին վերցնել՝ առանց ընդունելի այլընտրանք գտնելու: Բոլոր երեխաներն էլ ունեն հետաքրքրությունների որոշակի շրջանակ որից աչքերը կփայլեն: Դա կարող է լինել ստեղծագործականություն. փայտի արհեստներ, ռոբոտաշինություն կամ լող, կարտինգ, լուսանկարում կամ լուսանկարներից սլայդների պատրաստում: Պատկերացրեք, թե ինչպես կբարձրանա երեխայի ինքնագնահատականը »:

-Ստեղծել ընտանեկան կանոն ՝ արի տուն - անջատիր հեռախոսը: Օրինակ Apple- ի հիմնադիր Սթիվ Ջոբսը արգելեց իր երեխաներին ակտիվորեն օգտագործել գաջեթներ, իսկ Միխալկով - Կոնչալովսկու ընտանիքը մի կանոն ունի.երբ նրանք տուն են գալիս, բոլորը անջատում են բջջային հեռախոսները և միայն իրենց տան հեռախոսն են օգտագործում հաղորդակցության համար:Ի՞նչ, սարսափելի է երեկոյան բաց թողնել

հեռախոսը: Իսկ ի՞նչ կլինի, եթե մենք որոշակի հաղորդագրություններ տեսնենք կամ սոցիալական ցանցերում լրահոսը թերթենք ոչ թե երեկոյան, այլ առավոտյան:Իսկ երեկոյան շփվենք և հաճելի ժամանակ անցկացնենք մեր ընտանիքի անդամների հետ:Արդյունքում կունենանք սիրառատ, հոգատար, օրինակելի ընտանիք:

3.Ապահովել կառուցվածք

Հետևողական գործել դաստիարակության ոլորտում,սահմանել հստակ կանոներ: Երեխաներն, իրականում, շատ լավ հոգեբաններ են, և նրանք ակնթարթորեն հասկանում են, թե որտեղ են հանձնվում մայրիկն ու հայրիկը: Եվ, հենց որ դա զգան, նրանք կսկսեն հավատալ, որ պետք չէ հետևել կանոններին, համապատասխանաբար, բոլոր արգելքները կարող են խախտվել: Հետևաբար դաստիարակության արդյունքի համար շատ կարևոր են դաստիարակության բովանդակությունը, ձևերը, մեթոդները.

Մշակել պարգեւատրման համակարգ: Ինչպե՞ս մեծացնել կարգապահ երեխա . քաջալերեք նրան ` նկատելով նույնիսկ ամենափոքր հաղթանակներն ու վարքի դրական փոփոխությունները: Եթե ձեր երեխան կարգապահ է, ոչ քմահաճ, չի խախտում կանոնները և կատարում է ձեր պահանջները, ապա խրախուսեք նրան ամեն կերպ `սիրալիր խոսքով կամ գովաբանությամբ,միասին այցելեք կինոթատրոն, կենդանաբանական այգի, գնեք նոր խաղալիքներ, քաղցրավենիք և այլն: Բայց այն ստանալու համար նա պետք է կատարի ձեր պահանջները: Այս մեթոդը, լավ է աշխատում ճիշտ օգտագործելու դեպքում, բայց պետք չէ չարաշահել, քանի որ երեխան կարգապահ կլինի միայն «կաշառքի» համար: Չպետք է մոռանալ, որ երեխաները չեն կարող արդյունավետ զարգանալ՝ առանց հասկացված և գնահատված լինելու:Հետևաբար գովեք նրան, երբ նա դրան արժանի է, չէ որ դուք չեք մոռանում փնովել նրան, երբ նա թերանում է:

4. Ծնողների ներգրավվածությունը

Սովորողի ծնողի իրավունքները[1]	Սովորողի ծնողի պարտականությունները[2]
1) երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը և կրթության ձևը. 2) համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով. 3) դիմելու համապատասխան մարմիններին երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերով. 4) պաշտպանելու իր և իր երեխայի	1) երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար. 2) մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար. 3) հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել

Որպեսզի ծնողներին ճիշտ և հեշտ ներգրավենք դպրոցի գործունեության և իրենց զավակների կրթության գործնթացի մեջ,նախ և առաջ նրանք պետք է իմանան իրենց իրավունքները և պարտականությունները: Հնարավոր է,որ շատ ծնողներ չուսումնասիրեն իրավական դաշտում այն ամենը,ինչ ամրագրված է չափորոշչում:

օրինական շահերը համապատասխան մարմիններում. 5) մասնակցելու հանրակրթական ծրագրերի իրականացման և դրանց արդյունավետության գնահատման գործընթացին. 6) մասնակցելու ուսումնական հաստատության ներքին գնահատմանը. 7) մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:	աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ. 4) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ. 5) դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ. 6) սույն օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն. 7) հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը 8) սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց:

Չափորոշչով ամրագրված այս հոդվածը բացահայտում է ծնողների իրավունքները և պարտականությունները:Ես համոզված եմ, որ շատ ծնողներ երբեք չեն ուսումնասիրում չափորոշիչը և ծանոթ չեն այս հոդվածին:Այս հարցում նույնպես մենք՝ ուսուցիչներս, պետք է լինենք ուղղորդողի դերում:Կարելի է այս հարցը լուծել ծնողական ժողովների ընթացքում՝ ծնողներին ծանոթացնել չափորոշչին և չափորոշչային պահանջներին, իրենց իրավունքներին և պարտականություններին, ուսուցչի իչավունքներին և պարտականություններին, երեխայի իրավունքներին և պարտականություններին:

Իրավական դաշտում աշխատելուն զուգահեռ մենք պետք է աշխատանք կատարենք նաև հոգեբանական դաշտում:Քանզի, փորձը ցույց է տալիս, որ ծնողները հաճախ հանդիպում են խոչնդոտների երեխաների դաստիարակության և նրանց հետ ընդհանուր եզրեր գտնելու հարցում:Ծնող-ուսուցիչ համագործակցության մեջ հիմնական և կարևոր դերը կատարում է ուսուցիչը:Ուսուցչի վերահսկողության ներքո իրականացվում են նպատակաուղղված գործողություններ նման խնդիրներ լուծելու ուղիները գտնելու համար, ուղիներ, որոնք չեն ոտնահարի երեխայի անձը և ինքնությունը:

Ուսուցիչ-ծնող համագործակցությունը հարատև աշխատանք է, որը պետք է լինի անընդհատ :Այս համագործակցության կարևորությունը պետք է գիտակցի նաև ծնողը:Նա պետք է գիտակցի, որ իր ներգրավվածությունը ուսումնական պրոցեսում իրեն շատ ավելի մոտ կկանգնեցնի իր երեխային,նա կտեսնի երեխայի աճը, առաջընթացը, վարքը և այլն: Նա կկարողանա ճիշտ օգնել իր երեխային, ճիշտ ժամանակին խրախուսել, ճիշտ ժամանակին պատժել և այլն:Նա կդառնա ինքնավստահ,իր երեխային գնահատող:

Երեխաները պետք է դառնան փայլուն մտքի, գնահատող սրտի, ոսկյա ձեռքերի և բարձր զգացմունքների տեր մարդիկ։

Երեխան՝ ընտանիքի հայելին է, ինչպես ջրի կաթիլը արտացոլում է արևը, այնպես էլ երեխան արտացոլում է իր ծնողներին։

Ծնողների և ուսուցիչների հիմնախնդիրն է՝ յուրաքանչյուր երեխայի երջանկություն տալ։Ուսուցիչները կարող են տալ երեխաներին մարդկային մեծ երջանկություն միայն ծնողների աջակցությամբ և երկուստեք ուժերով։

Վ.Ա.Սուխոմլինսկի

Որպեսզի այս համագործակցությունը ճիշտ հիմքերի վրա լինի ուսուցիչը պետք է՝

- Ստեղծի դրական մթնոլորտ
- կազմակերպի հանդիպումներ ծնողների հետ, որպեսզի նրանց մանկավարժահոգեբանական կարողություններ փոխանցի
- պահպանի մանկավարժական տակտ և բարեկրթություն երեխաների մասին խոսելիս
- տեղեկացնի ծնողներին երեխաների կարգապահության և առաջադիմության մասին ● քննարկի համատեղ գործողությունները:

Իսկ այս ամենը ճշգրտորեն կազմակերպելու համար ուսուցիչը պետք է կիրառի ճիշտ մեթոդներ

և հնարներ:Ուսումնադաստիարակչական գործնթացում ծնողների հետ աշխատելու երեք հիմնական մեթոդ է կիրառվում:



Ինտերակտիվ մեթոդը իր մեջ ներառում՝

- Տվյալների հավաքագրում
- Տնային այցերի իրականացնում
- Հմաժողովներ
- Ծնողական ժողովներ
- Անհատական զրույցներ

Դպրոցական հաստատություններում վաղ ժամանակներից ի վեր որպես ծնողի հետ շփման միջոց հիմնականում կիրառվում են ծնողական ժողովները: Ծնողական ժողովը պետք է իրականացվի կոնկրետ թեմայի շրջանակներում, խմբային:Որ ընթացքում դասղեկը պետք է տա մանկավարժահոքեբանական և ուսումնադաստիարակչական կոնկրետ ցուցումներ: Ծնողական ժողովները պետք է իրականացվեն դրական մթնոլորտում, հարգալից միջավայրում և երբեք չպետք է վերածվեն բողոքի ակցիայի ծնողի համար:Պետք է կարողանալ այնպիսի ճիշտ մթնոլորտ ստեղծել,որ ծնողները անկաշկանդ բարձրաձայնեն իրենց հուզող հարցերը, արտահայտեն իրենց կարծիքը և արդյունքում իրականացնեն փորձի

փոխանակում:Ծնողական ժողովների ընթացքում պետք է քննարկել աշակերտների առաջադիմության հարցերը, շեշտը դնելով դրական փաստերի վրա:Ծնողական ժողովները ավելի անմիջական անցկացնելու համար կարելի է ընտրել այլ միջավայր օրինակ՝ այգի, որպեսզի այն ավելի մտերմիկ լինի:Կարելի է երբեմն ունենալ հյուրեր, նրանց համար ցանկալի:

Իսկ, եթե անհրաժեշտություն կա խիստ մտերմիկ զրույցների, պետք է իրականացնենք անհատական զրույցներ,որպեսզի ծնողները ավելի անկեղծ ու անկաշկանդ արտահայտվեն,ինչպես նաև մեր բաց տեքստերից չվիրավորվեն:Մենք ծնողների հետ աշխատելիս նրանց պետք է հիշեցնենք, որ մենք էլ ենք մարդ և կատարյան չենք ու կարող ենք սխալներ թույլ տալ ինչպես և իրենք:Մենք պետք է հիշենք, որ ոչ միայն լավ և գիտակ խորհրդատու պետք է լինենք, այլ նաև լավ ունկնդիր:Ցանկացած դեպքում ցանկալի է, որ մենք սկսենք գովասանքից:Կարևոր է նաև որ բոլոր հարաբերությունները հիմնված լինեն անկեղծության վրա: Անհրաժոշտ է խուսափել հրամայական և մեղադրական տոնով արտահայտություններից,ինչպես նաև պետք չէ խնդիրները միայն միակողմանի դիրտարկել՝ մեր դիտանկյունից, փորձենք լինել շրջահայաց:

Ավանդական մեթոդներն են՝

- Բաց դռների օրը
- Միասնական միջոցառումների կազմակերպումը
- Ստեղծագործական ցուցահանդեսները

Ավանդական մեթոդների կիրառումը մեզ հնարավորություն է տալիս օրինակ ծառայել ծնողների համար և ստեղծարար դաշտում ազատ և անկաշկանդ համագործակցել:

Օրինակ ՝ Բաց դռների օր հայտարարելով ծնողների համար մենք անցկացնում ենք օրինակելի դաս, որի ընթացքում օգտագործած մեթոդները ծնղները նույնպես կարող են կիրառել տանը՝ տնային առաջադրանքներ կատարելիս,նրանք ծանոթանում են մեր մեթոդների, մեր <<ձեռագրին>>,որով կարող են ուղղորդվել:

Այս մեթոդները ևս մեկ քայլ են իրար ավելի մոտ կանգնելու և մեկ միասնական բռունցք դառնալու համար:

Լուսաբանող մեթոդներն են՝

- Կայքէջերի ստեղծում և հրապարակում ● Ցուցահանդես
- Նկարներով ցուցապասռառի ստեղծում

Այս մեթոդները կիրառվում են վստահության հողի վրա,քանի որ ըստ օրենք մենք կարող ենք երեխաների նկարները հրապարակել միայն ծնողի համաձայնության դեպքում:Սակայն այս

մեթոդները բավականին ժամանակակից են և շատ ծնողների համար ընդունելի և ուրախալի, քանի որ նրանք սիրում են լինել սոցիալական հարթակներում և նոր տեխնոլոգիաներով հետաքրքրվել:

Չպետք է մոռանալ,որ մեք կարող ենք ծնողներին հատկացնել գրքեր, մանկավարժահոգեբանական ամսագրեր, կրթաթերթեր և այլն ինքնազարգացման համար:ԵՎ այս ամենի արդյունքում ծնողը պետք է գիտակցի, որմենք նրա համախոհն ենք, ոչ թե մրցակիցը:

Ստեղծել բարենպաստ հուզական մթնոլորտ ընտանիքում, դասարանում կառուցել վստահելի հարաբերություններ: Ի վերջո, ինքնագնահատականը օգնում է երեխային ավելի ճիշտ եւ համարժեք գնահատել սեփական եւ ուրիշների գործողությունները:

Դաստիարակել այնպիսի անձի, ով ներդաշնակորեն ինտեգրվելու է հասարակությանը:

Եզրակացություն և առաջարկություն

Ուսուցիչ, աշակերտ, ծնող համագործակցությունը եղել է, կա և կմնա ուշադրության կենտրոնում, որի ճիշտ կազմակերպման հիմնական պատասխանատվությունը կրում է ուսուցիչը:Այս խնդրի լուծումը ուսուցիչներից պահանջում է լինել գիտակ,անաչառ, ունենալ ճկուն միտք և ընտրել աշխատանքի կազմակերպման ճիշտ մեթոդներ և հնարներ նպատակին հասնելու համար:Որպեսզի նպաստենք կրտսեր դպրոցական երեխաների ֆիզիկական, մտավոր, հոգեբանական, սոցիալական և գիտական կայուն զարգացմանն ու աճին:

Ծնողներին դարձնենք մանկավարժական գործընթացի ակտիվ մասնակիցներ՝ օգնելով նրանց երեխաների դաստիարակության և կրթության համար պատասխանատվության իրականացման գործում:

Առաջարկում եմ՝

Ծնողներին ներգրավենք ուսումնադաստիարակչական գործընթաց,քանզի դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը մեծ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար:Փորձը ցույց է տալիս,որ աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում: Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են և ինքնավստահ:

Ծնողների ներգրավվածությունը դրական անդրադարձ է ունենում նաև ծնողի, դպրոցի և ուսուցչի համար:

Օգտագործված գրականություն և հղումներ

1. Ծնողավարության ձեռնարկ հատուկ կարիք ունեցող երեխաների համար-Սիրանուշ Անտոնյան, Նինա Մովսիսյան, Լիլիթ Թովմասյան

2. Ծնողների ներգրավվածությունը /ձեռնարկ/

3. Департамент образования Администрации городского округа Самара Муниципальное бюджетное образовательное учреждение дополнительного образования детей Детскоюношеский Центр ,Пилигримѣ г.о. Самара - ОСНОВНЫЕ ФОРМЫ И МЕТОДЫ РАБОТЫ ПЕДАГОГА С РОДИТЕЛЯМИ

4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 / Հանրակրթական պետական չափորոշիչ

5. https://nsportal.ru/shkola/raznoe/library/2017/11/15/pravila-professionalnogo-takta-v-rabote-s-roditelyami-uchashchihsya / Правила профессионального такта в работе с родителями обучающихся

6. https://nsportal.ru/detskiy-sad/raznoe/2019/09/22/interaktivnye-formy-raboty-s-roditelyami-v-dou#:~:text=%D0%92%D1%8B%D0%B4%D0%B5%D0%BB%D1%8F%D1%8E%D1%82%20%D1%81%D0%BB%D0%B5%D0%B4%D1%83%D1%8E%D1%89%D0%B8%D0%B5%20%D0%BD%D0%B5%D1%82%D1%80%D0%B0%D0%B4%D0%B8%D1%86%D0%B8%D0%BE%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B5%20%D0%B8%D0%BD%D1%82%D0%B5%D1%80%D0%B0%D0%BA%D1%82%D0%B8%D0%B2%D0%BD%D1%8B%D0%B5%20%D1%84%D0%BE%D1%80%D0%BC%D1%8B,%D1%82%D1%80%D0%B5%D0%BD%D0%B8%D0%BD%D0%B3%D0%B8%2C%20%D0%B8%D0%BD%D1%82%D0%B5%D1%80%D0%B0%D0%BA%D1%82%D0%B8%D0%B2%D0%BD%D1%8B%D0%B5%20%D0%B8%D0%B3%D1%80%D1%8B%2C%20%D0%BC%D0%B0%D1%81%D1%82%D0%B5%D1%80%20%E2%80%93 / Интерактивные формы и методы работы с семьей